ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

0053, ԵՐԵՎԱՆ, ԱՐԻՆ ԲԵՐԴԻ 3 ՆՐԲԱՆՑՔ, 3 :

ՀԵՌ.` +374 10 472 760
ՖԱՔՍ` +374 10 434 412; +374 10 472 771
էլեկտրոնային փոստ` mailbox@yccpp.com

No: 113

04. 03 . 2014թ

<<Շրջանակային համաձայնագրերով գրենական պիտույքների գրասենյակային նյութերի գնման մասին>>

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հնարավոր մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում **«ԵՐՋԷԿ ՇՀԱՊՁԲ 11/3-14/4»**:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել <<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ը, հասցեն` ք.Երևան, Արին բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեով մինչև 2014թ. մարտի 14-ը, ժամը 14:30-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Արմեն Պետրոսյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում` ըստ ստացման հերթականության` ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն <<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ում, հասցեն` ք.Երևան, Արին բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3, 2014թ. մարտի 14-ը, ժամը 14:30-ին:

Գնման առարկա է հանդիսանում <<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերումը:

<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ի կարիքների համար` գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 1.1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված`

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (հավելված N5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (հավելված N5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրերի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ purchase@yccpp.com:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Առդիր 19 էջ:

Հարգանքով

Գնումների համակարգող՝
Պայմանագրային բաժնի
առաջատար մասնագետ — Ա. Պետրոսյան

Հավելված 1
«ԵՐՋԷԿ-ՇՀԱՊՁԲ 11/3-14/4» ծածկագրով
ընթացակարգի հրավերի
N .... ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԴԻՄՈՒՄ

....-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ի կողմից N ԵՐՋԷԿ-ՇՀԱՊՁԲ 11/3-14/4 ծածկագրով հայտարարված ընթացակարգի .... չափաբաժնին
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

....-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

....-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

....-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

....:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

....
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«.........» .... 20.....թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 2
«ԵՐՁԷԿ-ՇՀԱՊՁԲ 11/3-14/4» ծածկագրով
ընթացակարգի հրավերի
N* «ԵՐՁԷԿ-ՇՀԱՊՁԲ 11/3-14/4» *ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ ն ի   ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N ԵՐՁԷԿ-ՇՀԱՊՁԲ 11/3-14/4 ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը),այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ______________________-ն առաջարկում է

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ գների՝

Չափա-բաժինների համարները	Գնման առարկայի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /պառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4

**3-րդ սույակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*
**Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:.*

____   ______________________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)   (ստորագրությունը)

Կ. Տ.

«______» ____________ 2014թ.

(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 1.1
Նախագիծ

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ և ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ

N ԵՐՋԷԿ-ՇՀԱՊՁԲ 14/4

ք. Երևան « » ---------------- 2014 թ.

<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Հ. Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և -----------------------ն, ի դեմս Ընկերության տնօրեն -------------------------ի (այսուհետև՝ վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելու դեպքում վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին, ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3:

2,2. Մատակարարումները կատարվում է ***Գնորդի հայտերի հիման*** վրա:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

3.Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից:

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել

այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները,

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմի չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագրի կնքելուց հրաժարված մասնակիցը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2. և 7.3. կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7. Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայամանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

4.ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ______________________ (____________________) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա N 3 հավելվածով՝ (որը կսահմանվի լրացուցիչ համաձայնագրով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում)՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում , որում դրամական միջոցները բավարարում են:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N4):

6.2. Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.6 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետը՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսելը, սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Նույն կետի համաձայն՝ կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:

9.2 Սույն պայմանագիրը համարվում է կնքված Կողմերի ստորագրման պահից և ուժի մեջ է մտնում գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանասական միջոցներ նախատեսվելու դեպքում և վճարման կարգը (N3 հավելվածը) սահմանող տվյալ պայմանագրի անբաժանելի մասը կազմող համաձայնագրի ստորագրման պահից:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ

փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելիմասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցում.

Սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում, չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Սույն պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2, 3, և 4 հավելվածները՝ բաղկացած 4 թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունք չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.9 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

11 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ	
ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ, 3	
ՀՎՀՀ 02205028	
Հ/Հ 2473600002170010	
<<Արդշինինվեստ բանկ>> ՓԲԸ	
Շենգավիթ մասնաճյուղ	
Գլխավոր տնօրեն՝	
-----------------------------	------------------------------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1
___ ___________ 2014թ. կնքված
պայմանագրի

Տեխնիկական բնութագիր

զրենական պիտույքների և գրասենյակային նյութերի

Չափա բաժնի համարը	Ապրանքի անվանումը	Չափման միավորը	քանակը	Տեխնիկական բնութագիրը
1	Գրքի կազմ և կազմի թաղանթ	հատ	300	**Գրքի կազմ**, ստվարաթղթե, սև գույնի, A4 ֆորմատի թղթի համար
		հատ	300	**Կազմի թաղանթ** A4 ֆորմատի զսպանակով կարելու համար, պոլիմերային նյութից (լամինացիայի)
2	Թղթապանակ	հատ	20	**Թղթապանակ** – կոշտ ստվարաթղթե կազմով , մետաղյա ամրացման հարմարանքով, սեղմակով 4 սմ, A4 ֆորմատի թղթերի կամ ֆայլերի համար
		հատ	20	**Թղթապանակ** կոշտ ստվարաթղթե կազմով , մետաղյա ամրացման հարմարանքով, սեղմակով – 5 սմ, A4 ֆորմատի թղթերի կամ ֆայլերի համար
		հատ	20	**Թղթապանակ** կոշտ ստվարաթղթե կազմով , մետաղյա ամրացման հարմարանքով, սեղմակով – 7սմ, A4 ֆորմատի թղթերի կամ ֆայլերի համար
3	Թղթապանակ (папака для бумаг)	հատ	160	**Թղթապանակ (папака для бумаг)** թղթյա կազմով և կապովի թելերով
4	Արագակար	հատ	160	**Արագակար** ստվարաթղթե կազմով և երկաթյա սեղմակով
5	Թղթապանակ ռեզինով	հատ	100	**Թղթապանակ ռեզինով,** պոլիմերային նյութից, A4 ֆորմատի թղթերի համար
6	Թղթապանակ երկաթյա ամրակով	հատ	50	**Թղթապանակ** A4 ֆորմատի թղթերի համար, երկաթյա ամրակով
7	Թղթապանակ ֆայլ	հատ	16	**Թղթապանակ ֆայլ 10**– պոլիմերային կազմով, Ա4 ֆորմատի թղթեր տեղադրելու համար
		հատ	16	**Թղթապանակ ֆայլ 20**– պոլիմերային կազմով, Ա4 ֆորմատի թղթեր տեղադրելու համար
		հատ	16	**Թղթապանակ ֆայլ 40**– պոլիմերային կազմով, Ա4 ֆորմատի թղթեր տեղադրելու համար
		հատ	16	**Թղթապանակ ֆայլ 60**– պոլիէթիլենային կազմով, Ա4 ֆորմատի թղթեր տեղադրելու համար
		հատ	16	**Թղթապանակ ֆայլ 80**– պոլիմերային կազմով, Ա4 ֆորմատի թղթեր տեղադրելու համար
8	Ֆայլ	հատ	2000	թափանցիկ պոլիմերային թաղանթ- **Ֆայլ**- A4 ձևաչափի թղթի համար, արագակարներին ամրացնելու հնարավորություն

		հատ	300	թափանցիկ պոլիմերային թաղանթ –**Ֆայլ**- A5 ձևաչափի թղթի համար, արագակարներին ամրացնելու հնարավորություն
9	Դակիչ	հատ	10	Ծակոտիչ գրասենյակային՝ մինչև 36 թերթ դակելու համար: ցենտրում կամ նրան համարժեք, մետաղյա
10	Կարիչ,	հատ	10	Գրասենյակային կարիչ մինչև 10 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար, 10 ցենտրում կամ նրան համարժեք:
		հատ	10	Գրասենյակային կարիչ մինչև 20 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար 24/6 ցենտրում կամ նրան համարժեք:
11	Ապակարիչ	հատ	10	Գրասենյակային Ապակարիչ(սկոբաքանդիչ) ցենտրում ՝ N10, N24, N26 և N26.6 ասեղներով կարված թղթերը քանդելու համար:
12	կարիչի մետաղալարե կապեր՝ ասեղներ	հատ	10	Ասեղսկոբա 23/10 ցենտրում
		տուփ	40	կարիչի մետաղալարե կապեր՝ ասեղներ Ասեղ 10 ցենտրում կամ նրան համհամարժեք
		տուփ	40	կարիչի մետաղալարե կապեր՝ ասեղներ Ասեղ 24/10 ցենտրում կամ նրան համհամարժեք
		տուփ	20	կարիչի մետաղալարե կապեր՝ ասեղներ Ասեղ 24/6, 26/6 ցենտրում կամ նրան համհամարժեք
13	Թուղթ ինքնակպչուն և , նշումների համար	հատ	100	Թուղթ ինքնակպչուն A4 (210x297 մմ) ձևաչափի համար ցենտրում կամ նրան համհամարժեք
		հատ	30	Կպչուն գունավոր թուղթ տրցակներով ցենտրում կամ նրան համարժեք
		հատ	30	Կպչուն դեղին թուղթ ցենտրում կամ նրան համարժեք, տրցակներով
14	Գրիչներ գելային	հատ	30	Գրիչ գելային Սելիո կամ նրան համարժեք 0,5մմ ծայրով
		հատ	30	Գրիչ գելային հասարակ ,0,5 մմ ծայրով,կապույտ,սև,
15	Գրիչներ գնդիկավոր	հատ	600	Գրիչ կապույտ Սելիո կամ նրան համարժեք
		հատ	120	Գրիչ, գնդիկավոր, սև հասարակ
16	Մատիտներ	հատ	100	Մատիտ գծագրական գրաֆիտե միջուկով, հասարակ, սև համպատասխան կարծրությամբ
17	Ամրակ	տուփ	100	Փոքր գրասենյակային ամրակ մետաղյա՝ մետաղական կամ պոլիմերային պատվածքով, (25-33) մմ երկարությամբ: Թղթի դարսը՝ լիարժեք ամրությամբ, միասնական պահելու կարողությամբ, ցենտրում տուփի մեջ 100 հատ 33մմ
18	Ամրակ (Բինդեռ) մետաղական պատվածքով	տուփ	30	Ամրակ (Բինդեռ) գրասենյակային, մետաղական պատվածքով 15 մմ երկարությամբ: Թղթի դարսը՝ լիարժեք ամրությամբ, միասնական պահելու կարողությամբ, ցենտրում
		տուփ	30	Ամրակ (Բինդեռ) գրասենյակային, մետաղական պատվածքով 19 մմ երկարությամբ: Թղթի դարսը՝ լիարժեք ամրությամբ, միասնական պահելու կարողությամբ, ցենտրում
		տուփ	30	Ամրակ (Բինդեռ) գրասենյակային, մետաղական պատվածքով 25 մմ երկարությամբ: Թղթի դարսը՝ լիարժեք ամրությամբ, միասնական պահելու կարողությամբ, ցենտրում

		տուփ	30	Ամրակ (Բինդեռ) գրասենյակային, մետաղական պատվածքով 32 մմ երկարությամբ: Թղթի դարսը՝ լիարժեք ամրությամբ, միասնական պահելու կարողությամբ, ցենտրում
		տուփ	30	Ամրակ (Բինդեռ) գրասենյակային, մետաղական պատվածքով 41մմ երկարությամբ: Թղթի դարսը՝ լիարժեք ամրությամբ, միասնական պահելու կարողությամբ, ցենտրում
		տուփ	30	Ամրակ (Բինդեռ) գրասենյակային, մետաղական պատվածքով 51 մմ երկարությամբ: Թղթի դարսը՝ լիարժեք ամրությամբ, միասնական պահելու կարողությամբ, ցենտրում
19	Քանոն	հատ	40	Ուղիղ քանոն՝ գծաբաժանումներով, առավելագույն երկարությունը 30 սմ, պլաստմասե:ցենտրում
20	Բաղադրանյութ(շտրիխ)	հատ	60	Շտրիխ սրվակով, հեղուկ վրձինով
		հատ	20	Շտրիխ-կորեկտոր գրիչանման
21	Գծանիչ(Մարկեր)	հատ	20	Մարկեր գրատախտակի գունավոր
		հատ	20	Տարբեր գույնի՝ նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար, ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից, տափակ ծայրով:
22	Գրասենյակային գիրք	հատ	80	Գրասենյակային գիրք, մատյան 70-200էջ, տողանի, սպիտակ էջերով
23	Նոթատետր, նշումների տետր	հատ	4	Նոթատետր, ամսաթվով
		հատ	8	Նշումների տետր A4 ֆորմատի
24	թանաք	հատ	6	Թանաք կնիքի բարձիկի համար
25	բարձիկ	հատ	4	Բարձիկ կնիքի
26	Էջաբաժանիչներ	հատ	30	Էջաբաժանիչ փոքր, պլաստիկից, կպչուն գունավոր
		տուփ	20	Էջաբաժանիչ Ա4 ձևաչափի, պլաստիկից, 20 թվային բաժանիչներով: տուփի մեջ 10 հատ գունավոր
27	Գրաենյակային դանակ	հատ	20	Գրաենյակային դանակ
28	Գրաենյակային մկրատ	հատ	10	Գրաենյակային մկրատ
29	Սոսինձ	հատ	30	Սոսինձ(սոսնձամատիտ) գրասենյակային թուղթսոսնձելու համար
30	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն(սկոտչ)	հատ	30	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն(սկոտչ) փոքր, գրասենյակային
		հատ	2	Պ ոլիմերային ինքնակպչուն ժապավեն(սկոտչ) մեծ, տնտեսական
31	Ծրար	հատ	400	Ծրար փոքր երկար, 90 % սպիտակության, 1 մ² մակերեսը՝ 100 գ զանգվածով N1 օֆսեթային թղթից, ինքնասոսնձվող, առանց ծալովի մասերի, քաշի կպչուն
			40	Ծրար Ա4 (210x297) մմ ձևաչափի, 90 % սպիտակության, 1 մ² մակերեսը՝ 100 գ զանգվածով N1 օֆսեթային թղթից, ինքնասոսնձվող:
			60	Նամակի ծրար, A5 ձևաչափի Ծրարներ չթափանցող, եռանկյունաչափ փակվող, խիտ թղթից՝ նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար,

				սահմանված չափի և ձևի, ինքնասոսնձվող
			10	Նամակի ծրար, Ա3Ֆ ձևաչափի, Ծրարներ չթափանցող, եռանկյունաչափ փակվող, խիտ թղթից՝ նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար, սահմանված չափի և ձևի, ինքնասոսնձվող
32	Սպիրալներ	հատ	100	Սպիրալ 6-12մմ սև կամ կապույտ, պոլիմերային նյութից
		հատ	120	Սպիրալ 14-20մմ սև կամ կապույտ, պոլիմերային նյութից
		հատ	60	Սպիրալ 22-30մմ սև կամ կապույտ, պոլիմերային նյութից
33	Բլոկնոտներ	հատ	40	Բլոկնոտ Ա4, էջերը իրար կպած վերիին մասում
		հատ	40	Բլոկնոտ Ա5, էջերը իրար կպած վերիին մասում
		հատ	40	Բլոկնոտ 20սմ զսպանակով,
34	Թուղթ	տուփ	350	Թուղթ Ա4 ֆորմատի, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, հիմնական քաշը 80 գ/մ² ±1,5 (IS0 536), հաստությունը 105±2 միկրոն(IS0 534), հարթությունը 160ml/min(IS0 8791), սպիտակությունը 168 CIE %(IS0 11475), թափանցիկությունը ոչ պակաս 92% (IS0 2471), պայծառությունը 101%, կոշտությունը 115mN(IS0 2493)MD, կոշտությունը 50 mN(IS0 2493)CD, խոնավությունը 4,3-4,8% օդի թափանցելիությունը առավելագույնը 1250 ml/min : Premier արկղի մեջ 5 տուփ

Սույն տեխնիկական բնութագրին չհամապատասխանող մասնակցի հայտը կմերժվի:

ԳՆՈՐԴ
<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ
ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ, 3
ՀՎՀՀ 02205028
Հ/Հ 2473600002170010
<<Արդշինինվեստ բանկ>> ՓԲԸ
Շենգավիթ մասնաճյուղ
Գլխավոր տնօրեն՝

(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2
___ __________ 2014թ.կնքված
պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափ. N	Չափաքանակի անվանումը	Ապրանքի անվանումը	Միավորի գինը	Չափման միավորը	Քանակը / նախատեսված է 2014թ. համար/				Ընդամենը	
					I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	Քանակը	Գինը
1	Գրքի կազմ և կազմի թաղանթ	Գրքի կազմ		հատ	75	75	75	75	300	
		Կազմի թաղանթ		հատ	75	75	75	75	300	
2	Թղթապանակ	Թղթապանակ –4 սմ,		հատ	5	5	5	5	20	
		Թղթապանակ կ– 5 սմ,		հատ	5	5	5	5	20	
		Թղթապանակ– 7սմ		հատ	5	5	5	5	20	
3	Թղթապանակ (папака для бумаг)	Թղթապանակ (папака для бумаг)		հատ	40	40	40	40	160	
4	Արագակար	Արագակար		հատ	40	40	40	40	160	
5	Թղթապանակ ռեզինով,	Թղթապանակ ռեզինով,		հատ	25	25	25	25	100	
6	Թղթապանակ	Թղթապանակ A4		հատ	15	15	15	5	50	
7	Թղթապանակ ֆայլ	Թղթապանակ ֆայլերով 10–		հատ	4	4	4	4	16	
		Թղթապանակ ֆայլերով 20–		հատ	4	4	4	4	16	
		Թղթապանակ ֆայլերով 40–		հատ	4	4	4	4	16	
		Թղթապանակ ֆայլերով 60–		հատ	4	4	4	4	16	

		Թղթապանակ ֆայլերով 80–լու համար		հատ	4	4	4	4	16	
8	ֆայլ	Ֆայլ- A4 ձևաչափի		հատ	500	500	500	500	2000	
		Ֆայլ- A5 ձևաչափի		հատ	75	75	75	75	300	
9	Դակիչ	դակիչ		հատ	3	3	2	2	10	
10	Կարիչ	կարիչ մինչև 10 թերթ		հատ	3	3	2	2	10	
		կարիչ մինչև 20 թերթ		հատ	3	3	2	2	10	
11	ապակարիչ	Ապակարիչ(սկոբաքանդիչ)		հատ	3	3	2	2	10	
12	կարիչի մետաղալարե կապեր՝ ասեղներ	Ասեղսկոբա 23/10 ցենտրում		հատ	3	3	2	2	10	
		կարիչի մետաղալարե կապեր՝ ասեղներ Ասեղ 10		տուփ	10	10	10	10	40	
		կարիչի մետաղալարե կապեր՝ ասեղներ Ասեղ 24/10		տուփ	10	10	10	10	40	
		կարիչի մետաղալարե կապեր՝ ասեղներ Ասեղ 24/6, 26/6 ցենտրում		տուփ	5	5	5	5	20	
13	թուղթ ինքնակպչուն և , նշումների համար	Թուղթ ինքնակպչուն A4 (210x297 մմ) ձևաչափի համար		հատ	25	25	25	25	100	
		Կպչուն գունավոր թուղթ տրցակներով		հատ	8	8	7	7	30	
		Կպչուն դեղին թուղթ		հատ	8	8	7	7	30	
14	Գրիչ գելային	Գրիչ գելային Սելիո 0,5մմ ծայրով		հատ	8	8	7	7	30	

		Գրիչ գելային հասարակ ,0,5 մմ ծայրով,կապույտ,սև,		հատ	8	8	7	7	30	
15	Գրիչ գնդիկավոր,	Գրիչ կապույտ		հատ	150	150	150	150	600	
		Գրիչ, գնդիկավոր, սև հասարակ		հատ	30	30	30	30	120	
16	Մատիտներ	մատիտ		հատ	25	25	25	25	100	
17	Ամրակ,	Փոքր ամրակ		տուփ	25	25	25	25	100	
18	Ամրակ (Բինդեռ)	Ամրակ (Բինդեռ) 15 մմ		տուփ	8	8	7	7	30	
		Ամրակ (Բինդեռ) 19 մմ		տուփ	8	8	7	7	30	
		Ամրակ (Բինդեռ) 25 մմ		տուփ	8	8	7	7	30	
		Ամրակ (Բինդեռ) 32 մմ		տուփ	8	8	7	7	30	
		Ամրակ 41մմ		տուփ	8	8	7	7	30	
		Ամրակ (Բինդեռ) 51 մմ		տուփ	8	8	7	7	30	
19	Քանոն	քանոն		հատ	10	10	10	10	40	
20	Բաղադրանյութ (շտրիխ)	Շտրիխ սրվակով, հեղուկ վրձինով		հատ	15	15	15	15	60	
		Շտրիխ-կորեկտոր գրիչանման		հատ	5	5	5	5	20	
21	Գծանիչ(Մարկեր)	Մարկեր գրատախտակի գունավոր		հատ	5	5	5	5	20	
		Տարբեր գույնի՝		հատ	5	5	5	5	20	
22	Գրասենյակային գիրք	Գրասենյակային գիրք, մատյան 70-200էջ,		հատ	20	20	20	20	80	
23	Նոթատետր, նշումների տետր	Նոթատետր, ամսաթվով		հատ	1	1	1	1	4	
		Նշումների տետր A4 ֆորմատի		հատ	2	2	2	2	8	

24	թանաք	Թանաք կնիքի բարձիկի համար		հատ	2	2	1	1	6	
25	բարձիկ	բարձիկ		հատ	1	1	1	1	4	
26	Էջաբաժանիչներ	Էջաբաժանիչ փոքր		հատ	8	8	7	7	30	
		Էջաբաժանիչ		տուփ	5	5	5	5	20	
27	Գրասենյակային դանակ	դանակ		հատ	5	5	5	5	20	
28	Գրասենյակային մկրատ	մկրատ		հատ	3	3	2	2	10	
29	Սոսինձ	սոսինձ		հատ	8	8	7	7	30	
30	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն(սկոտչ)	ինքնակպչուն ժապավեն(սկոտչ) գրասենյակային փոքր		հատ	8	8	7	7	30	
		ինքնակպչուն ժապավեն(սկոտչ) տնտեսական մեծ		հատ	1	1	-	-	2	
31	Ծրարներ	Ծրար փոքր երկար,		հատ	100	100	100	100	400	
		Ծրար Ա4		հատ	10	10	10	10	40	
		Ծրար, Ա5		հատ	15	15	15	15	60	
		Ծրար, Ա3		հատ	3	3	2	2	10	
32	Սպիրալներ	Սպիրալ 6-12մմ սև կամ կապույտ		հատ	25	25	25	25	100	
		Սպիրալ 14-20մմ սև կամ կապույտ		հատ	30	30	30	30	120	
		Սպիրալ 22-30մմ սև կամ կապույտ		հատ	15	15	15	15	60	
33	Բլոկնոտներ	Բլոկնոտ Ա4,		հատ	10	10	10	10	40	
		Բլոկնոտ Ա5,		հատ	10	10	10	10	40	
		Բլոկնոտ 20սմ զսպանակով,		հատ	10	10	10	10	40	

34	Թուղթ	Ա4 ֆորմատի		տուփ	90	90	85	85	350	
ԸՆԴԱՄԵՆԸ										

ԳՆՈՐԴ
<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ
ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ, 3
ՀՎՀՀ 02205028
Հ/Հ 2473600002170010
<<Արդշինինվեստ բանկ>> ՓԲԸ
Շենգավիթ մասնաճյուղ
Գլխավոր տնօրեն՝

____
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

____
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
___ ___________ 2014թ.կնքված
պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 20 14 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.		... %	... %	...%	... %	...%	... %	... %	... %	... %	... %	... %	... %	**100 %**

* *Վճարումները կկատարվեն համաձայն պայմանագրի վճարման կարգի:*

ԳՆՈՐԴ
<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ
ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ, 3
ՀՎՀՀ 02205028
Հ/Հ 2473600002170010
<<Արդշինինվեստ բանկ>> ՓԲԸ
Շենգավիթ մասնաճյուղ
Գլխավոր տնօրեն՝

____
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

____
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 4
___ __________ 2014թ. կնքված
պայմանագրի

Գնորդ **Վաճառող**

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N __
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«______« «__________________« 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ --

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «________« «__________________« 20 թ.

Պայմանագրի համարը՝________________________.

Գնորդը՝ ի դեմս______________________և Վաճառողը՝ ի դեմս_____________________________, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ մատակարարումները) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը «___« «__________« 20 թ–ից «___« «__________« 20 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ մատակարարումները.

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշները	Մատակարա-րումների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակա-ցույցի)
Ընդամենը	------------	------------		------------

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Մատակարարումը հանձնեց
(ստորագրություն)
ազգանուն ______________________
Կ.Տ

Մանակարարումը ընդունեց
(ստորագրություն)
ազգանուն ______________________
Կ.Տ